Դանիել Վարուժան

Հաշիշ

Սիրտը լեցուն է բանտին խավարով.
Ա՛լ դաշտ ու երկինք չը կան իր համար.
Պիտ՝ գըներ աչքի հազար գոհարով՝
Աստըղ մ՝ան նույն իսկ՝ ասուպ ալ ըլլար:

-«Օ՛ն, հաշիշ բերեք, կը մըրմընջե ան,
Երբ աշխարհս ինձմե այսպես կ՝ապշոպեն,
Ես կ՝ուզեմ հոգվույս մեջ ըստեղծել զայն:-
Օրորվիլ, բուժի՛լ հըզոր ցընորքեն:

Օ՛ն, հաշիշ բերեք»:- Եվ ան կը ծըխե,
Իբր ուրախութեան ըստի՛նքը ծըծեր.
Կը հոսի երազ ջըլերուն մեջե.
Աշխարհը լուծված կ՝ելլա սիրտն ի վեր:

Աչքերը բանտին դիմաց կը գոցվին՝
Ապարանք մ՝իր մեջ գըտնելու համար.
Բիբերն հըրաժեշտ կու տան խավարին՝
Աստղեր բերելու խոստումով ճարտար:

Եվ կը քընանա՛ արվեստի քընով՝
Ինչպես խըղճի խայթն՝ աղոթքե մը վերջ.
Ո՛վ թըշվառ հոգի, հիմա ապահով,

Ազատ է և տեր՝ ցընորքներուն մեջ.

Եվ կ՚երազե շա՛տ, շատ բաներ աղվոր
Կամ հուրիներն ալ աղվոր կ՚երազե.-
Բրոնած շրդթայի մ՚օղակն ահավոր՝
Կրնոջ մը մանյակը զայն կը կարծե:

Վարդե, ոսկիե գետի մ՚ափն ի վար
Իր մանկան խաղին կը ժրպտի հիմա.
Կամ ինքն իսկ մանուկ՝ լրճակին մեջ հար
Երկինքն՝ երկրնքին մեջ զինք կը տեսնա:

Շրրթունքները լուռ, մեղմիկ կը դողան՝
Անշուշտ ուրիշներ գրտնալնուն համար.
Թերևս (ո՞վ գիտե) կը լրրացնե ան
Համբույր մ՚ատենով թողված կիսկատար:

Կամ կը շրրջի արտն՝ ազատ քայլերով.
Կը վայլե երկինքն, աստղերու արգանդ:
Մի՛ արթրնցրնեք, քանզի ապահով
Զինք կը փոխադրեք լույս աշխարհեն՝ բանտ:

Թողեք քրնանա.- թող հաշիշին մեջ
Սև շրդթան բեկտի՝ վիշտը լուծելով:
... Ո՛վ անմահ մեկոն, երազի առէջ,
Դու ցրնորքն հյուսե ոսկեղեն թելով.

Հյուսե խրնդություն մը անրրջական
Իր խոցված հոգվույն, ուղեղին վրրա.
Ժրպիտն աղվո՞ր է, եթե նույն իսկ ան
Խաբված ջրդերու վիժա՛ծն ալ ըլլա: